

**5.21. Հանրապետության ջրամատակարարումը  
2000թ. հունվարի 1-ի դրությամբ**

Ըստ հանրապետության բնակավայրերի ջրամատակարարումն իրականացնող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2000թ. հունվարի 1-ի դրությամբ կենտրոնացված ջրամատակարարման համակարգում ընդգրկված են եղել հանրապետության բոլոր քաղաքները և գյուղական վայրերի 36.5%-ը: Ջրմուղի փողոցային ցանցի միագիծ ընդհանուր երկարությունը կազմել է 6501.3 կմ, որից քաղաքային բնակավայրերում՝ 3406.2 կմ (Երևան քաղաք՝ 1051.3 կմ), իսկ գյուղական վայրերում՝ 3095.1 կմ:

1999թ. ընթացքում բոլոր սպառողներին բաց է թողնվել 215.5 մլն.խորանարդ մետր ջուր,այդ թվում՝ բնակչությանը՝ 138.7 մլն.խորանարդ մետր, կոմունալ-կենցաղային օբյեկտներին՝ 8.0 մլն. խոր. մ:

**Բոլոր սպառողներին բաց թողնված ջրի ծավալների բաշխվածությունն ըստ մարզերի**

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջուրը		% -ով մարզի փաստացի ստացած ջրի ընդհանուր ծավալից		
	մլն. խոր. մետր	%-ով ընդհանուրից	բնակարանային ֆոնդին	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արդյունաբերական օբյեկտներին
Ընդամենը հանրապետությունում այդ թվում՝	215.5	100.0	64.3	3.7	32.0
Երևան	121.4	56.3	67.2	3.0	29.8
Արագածոտն	4.5	2.0	54.2	3.0	42.8
Արարատ	11.6	5.4	66.2	3.6	30.2
Արմավիր	12.2	5.7	60.4	5.1	34.5
Գեղարքունիք	7.7	3.6	62.3	4.2	33.5
Լոռի	13.3	6.2	63.7	2.6	33.7
Կոտայք	18.1	8.4	53.9	2.6	43.5
Շիրակ	14.2	6.6	63.2	4.8	32.0
Սյունիք	8.2	3.8	58.6	10.2	31.2
Վայոց Ձոր	1.6	0.7	64.2	8.7	27.1
Տավուշ	2.7	1.3	65.8	12.0	22.2

Վերջին տարիներին հանրապետությունում նկատվում է ջրամատակարարման ծավալների վատացում: Այսպես, 1999թ. բոլոր սպառողներին բաց թողնված ջրի քանակը 1994թ. համեմատ պակասել է 63.5%-ով, Երևան քաղաքում՝ 55.8%-ով: Ընդ որում, նույն ժամանակահատվածում միայն բնակարանային ֆոնդին բաց թողնված ջրի ծավալը Երևանում պակասել է 55.0%-ով:


Չնայած 1998թ. համեմատ ջրմուղի եղած հզորությունը օգտագործումը ավելացել է 1.7 տոկոսային կետով, սակայն այդ ցուցանիշը հեռու է բավարար լինելուց:

	1991	1992	1994	1996	1998	1999
Ընդամենը հանրապետությունում որից՝	61.0	50.3	31.0	23.9	23.6	25.3
քաղաքային բնակավայրերում որից՝ Երևան քաղաքում	62.1	50.4	29.2	22.0	24.9	33.1
	71.4	53.6	31.5	24.9	30.5	47.8

Ջրմուղի հզորության օգտագործման գործակիցը 1999թ. կազմել է ընդամենը 25.3%, 1991թ. 61.0%-ի դիմաց:


Դեռևս զգալի են ջրի կորուստները ցանցում: 1999թ. այն կազմել է բոլոր սպառողներին բաց թողնված ջրի ծավալի 51.5 %, Երևան քաղաքում՝ 59.1 %: Հարկ է նշել, որ վերջին 10 տարիներին այդ ցուցանիշն պահպանում է աճի միտումները:

**Ջրի կորուստներն ջրմուղ ցանցում, %-ով ցանցին տրված ջրի ծավալի նկատմամբ**




Ջրի կորուստների հիմնական պատճառը ջրագծերի ֆիզիկական մաշվածությունն է: Տարիներ շարունակ ջրագծերի սպասարկման և վերանորոգման անբավարար աշխատանքների պատճառով ներկայումս հանրապետության ջրային տնտեսությունը գտնվում է անմխիթար վիճակում: Միայն Երևան քաղաքում անհրաժեշտ է փոխել 709.8 կմ ջրմուղի գծեր /ընդհանուր ջրագծի երկու երրորդը/: 1999թ. ընթացքում ջրմուղի համակարգում եղել են 20168 վթարներ, որից Երևանում՝ 1196:

**1999թ. ջրօգտագործման և ջրի կորուստների տոկոսային հարաբերակցությունն ըստ մարզերի**



Մեկ բնակչին բաց թողնված ջրի օրական քանակը շատ ցածր է սանիտարական նորմաներից: 1999թ. տվյալներով հանրապետության մեկ բնակչին՝ 134 լիտր: Երևանում այն կազմել է 179 լիտր և 1994 թ. համեմատ պակասել է 219 լիտրով: Բնակչությանը բաց թողնված ջրի միջին օրական քանակը շատ ցածր է Շամլուղում (14 լիտր), Ախթալայում (31 լիտր), Արարատում (33 լիտր) և այլն:

Բնակչության փաստացի սպառած խմելու ջրի միջին օրական քանակը, լիտր/օր



Ջրի իրացումից ստացված ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները. մլն.դրամ

Ընդամենը, մուտքեր	9756.1
որից՝ ջրի իրացումից	2100.9
դրանից՝ բնակչությունից	867.8
Ընդամենը, ծախսեր	7788.9
որից՝ նյութական ծախսեր	5894.5

1999 թ. հանրապետությունում ջրամատակարարման տարեկան դրամական մուտքերի 21.5 % կազմել են ջրի իրացումից ստացված դրամական մուտքերը: Վերջինիս 41.3% բնակչությունից հավաքագրական դրամական մուտքերն են:

Ընդ որում մեկ խոր.մ օգտագործած ջրի դիմաց բնակչության համար սահմանված սակագինը 1999թ. հանրապետության ըստ առանձին տարածաշրջանների տատանվում է 30-50 դրամի սահմաններում, Երևանում այն սահմանվել է 46 դրամ:

Հանրապետությունում ջրի իրացումից տարիների ընթացքում կուտակվել է 20040.9 մլն. դրամ պարտք, որից բնակչությունից՝ 14599.8 մլն. դրամ /կամ 72.9 %/, իսկ հաշվետու տարում՝ 6144.6 մլն.դրամ, որից՝ բնակչությունից՝ 4917.1 մլն դրամ /կամ 80.0 %/.

Տարիների ընթացքում ջրի իրացումից կուտակված պարտքերի 57.1 %-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին: Հաշվետու տարում այդ ցուցանիշը կազմել է 58.0 %: